



նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նմանեցէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ կուռքերու զոհուած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող չարհամարհէ՝ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած զայն ընդունեց է: Ո՞վ ես դուն որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինչո՞ւ: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին թէ զԱստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի յարմար է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտռողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չզննողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ կուռքերու զոհուած միս ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ զոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք. որ կը նշանակէ թէ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի մեր Տէրը ըլլայ թէ՛ կեանքի եւ թէ՛ մահուան մէջ հաւասարպէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատենանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Ես ինձնով կ'երդնում,- կ'ըսէ Տէրը,- որ ամէն ծուկ պիտի խոնարհի առջեւ եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ե՛ս եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրինք զիրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանշումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ զայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբորդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չե՛ս ըլլար երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս մեռաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ

ուղիղ սեպած բանդ հայհոյութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի կ'ըլլայ եւ մարդոց գովելի:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան մաքուր է ինքնին. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքրութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

Փա՛ռք տանք Աստուծոյ, որ կրնայ ձեզ ձեր հաւատքին մէջ հաստատուն պահել այն աւետարանով որ բերի ձեզի Յիսուս Քրիստոսը քարոզելով: Այդ աւետարանը Աստուծոյ փրկութեան ծրագրին յայտնութիւնն է, որ անցեալ բոլոր ժամանակներուն մէջ ծածուկ մնացած էր: Այժմ այդ խորհուրդը, մարգարէական գրութիւններով յայտնուած, մշտնջենաւոր Աստուծոյ հրամանով բոլոր հեթանոսներուն ծանուցուեցաւ, որպէսզի ամէն ոք հաւատայ եւ հնազանդի Քրիստոսի: Ուստի Յիսուս Քրիստոսի միջոցաւ յաւիտեան փա՛ռք Աստուծոյ, որ ի՛նք միայն իմաստուն է: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(6.1-21)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
«Զգո՛յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

«Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմբուկով մի՛ ըներ, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող

չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

«Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէք.-

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկիրքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, գորութիւնը եւ փառքը. ամէն:

«Եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

«Երբ ծոմ պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Վստահ եղէք, միայն այդ է իրենց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ ծոմ կը պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի մարդիկ չգիտնան թէ ծոմ կը պահես. եւ Աստուած որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը կրծեն ու կը փտեցնեն եւ կամ գողերը տանդ պատը քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը երկիրքի մէջ դիզեցէք, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար կրծել եւ փտեցնել զայն եւ ոչ ալ գողերը կրնան տանդ պատը քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ուր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ  
ԿՐՕՆԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Գորգոր Ծ. Արդ. Չրեթճեան.

Աշխարհի գրեթէ բոլոր կրօններուն մէջ ալ բարոյականութեան վրայ որոշ շեշտադրում մը կայ: Բոլորն ալ ո՛չ միայն կը գովեն բարին, լաւը, գեղեցիկը, արդարը, այլ խստապահանջ են անոնց յարգումին ու պահպանումին՝ մարդուն կողմէ: Բարին ու լաւը, գեղեցիկն ու ընտիրը, ճշմարիտն ու արդարը պէտք է յայտնաբերուին, պէտք է գնահատուին ու պէտք է պաշտպանուին: Ահա ա՛յս է որ կը ջանան իրագործել կրօնները:

Իսկ քրիստոնէութիւնը ա՛յլ մասնագիտութիւն մը ունի: Մինչ ուրիշ կրօններ վատը լաւէն կը զանազանեն, չարը բարիէն կը զատորոշեն, քրիստոնէական կրօնը լաւը լաւէ՛ն զատորոշելու նրբութիւնն ալ կ'ուսուցանէ՝ կեղծը ու ճշմարիտը իրարմէ զանազանելու աստուածային մօտեցումով: Աստուած գիտէ՛ քու սիրտդ ու անոր մէջի հայելիին վրայէ՛ն կը դիտէ քու հաւատքդ: Արտաքինապէս հաւատացեալ երեւիլդ բաւարար չէ՛ հաւատացեալ կոչուելու համար: Ներքին մարդն ալ կարեւոր է: Փարիսեցիին ու մաքսաւորին առակը այս մասին հանգամանօրէն կը պատմէ (ՂԿ 18.10-14):

Քրիստոնէական դաստիարակութիւնը Աստուծոյ գործօն ներկայութիւնն է մեր կեանքէն ներս, ու յատկապէս նոր սերունդներու հոգեւոր ու բարոյական կրթութեան իմաստով: Այս կրթութեան կարիքը ունինք ամէնքս, ամէն յարկէ ներս: Միայն եկեղեցոյ յարկը չէ՛ քրիստոնէական դաստիարակութիւն կատարելիք վայրը: Դպրոցին մէջ միայն կրօնի դասանիւթին համար սահմանուած պահը չէ՛ քրիստոնէական դաստիարակութիւն կատարելիք ժամանակը: Ակումբին մէջ տարին կամ երկու տարին անգամ մը բարոյագիտական հարցի մը մասին դասախօսութեան մը իմաստը չունի՛ քրիստոնէական դաստիարակութեան ուսուցումը: Ո՛չ ալ տան մէջ, Կիրակի օրերը եկեղեցի երթալու քարոզչութիւն կատարելը քրիստոնէական դաստիարակութիւն ջամբել պիտի նշանակէր: Քրիստոնէական դաստիարակութիւնը ինքնին կեանքի ձեւ մըն է, ի դիմաց կեանքէն եկող ամէն տեսակի խորթ երեւոյթներուն, որոնք անյարիր են մեր եկեղեցական, ազգային, մշակութային արժէքներուն:

Եւ այս կեանքի ձեւը իւրաքանչիւր գիտակից

հայ պէտք է արտայայտէ գործնապէս: Հոգեւորական ես՝ քաջաբար խորանէն պիտի արտայայտես կեցուածքդ եւ այդպէ՛ս քրիստոնէական դաստիարակութիւն պիտի ջամբես: Ուսուցիչ ես՝ ի՛նչ նիւթ ալ դասաւանդես, նոյնիսկ ո՛չ հայագիտական առարկաներ, մեր եկեղեցւոյ ու ազգին հաւատացած արժէքներո՛ւն, սկզբունքներո՛ւն ու նկարագրային գիծերուն խորթ երեւոյթները պիտի մերժես՝ այդպէ՛ս նպաստելով քրիստոնէական դաստիարակութեան հաւաքական աշխատանքին: Հա՞յր ես, եւ մանաւանդ մա՞յր ես, ամենէն ծանր լուծը քո՛ւ ուսիդ դրուած է՝ տան մէջ քու «եկեղեցի՛դ» հիմնելու: Բանաստեղծը շատ որակաւորումներ տուած է մօր, իբրեւ տան ճրագ, սիւն, առաստաղ, եւայլն, բայց այս պարագային այդ եկեղեցիին խորանն է մայրը, որուն առջեւ պիտի աղօթէ կեանքին նոր բացուող մանուկը: Ամէն մէկ շարժումը մօր՝ քրիստոնէական դաստիարակութիւն է բառին լայն հասկացողութեամբ: Այն ատեն ահա, մեր եկեղեցւոյ հայրերուն գեղեցիկ մէկ պատկերացումովը՝ ընտանիքը կը դառնայ փոքր եկեղեցի, ուր կը մտնենք երկիւղածութեամբ, յարգանքով, ուր կը տիրէ փոխադարձ վստահութիւն եւ այդ ամէնուն ծածկողական առաստաղը կը դառնայ սէրը, ինչպէ՛ս կ'ըսէ մեր եկեղեցւոյ փայլուն մտքերէն մին՝ Յակոբ Նալեան Պատրիարք:

Չմոռնամ այստեղ առանձնացնելու հայ ընտանիքներուն մէկ այլ առաւելութիւնը, որ յատկապէս քրիստոնէական դաստիարակութեան առօրեայ աշխատանքին կու տայ հիմնաւորում: Ատիկա մեծ մայրերուն ներկայութիւնն է տան մէջ: Ամէնքդ ալ գիտէք, որ մանաւանդ հայ ընտանիքներուն առանձնաշնորհումն է այս: Պէտք է առողջ պահել այս գիտակցութիւնը: Հայ մեծ մայրը իր օճախին մէջ սերունդէ սերունդ փոխանցուած աւանդութիւններուն, սովորութիւններուն պահպանողը չէ՛ միայն, այլ յաջորդ սերունդին մէջ զանոնք արմատացնողը: Եւ ա՛յս է ընտանիքը ընտանի՛ք դարձնողը, անոր անդամները զիրար կապո՛ղը, շողախո՛ղը, միազանգո՛ղը ու զայն նահապետական ժառանգութեա՛մբ օժտողը:

Մեծ մայրեր, իսկապէս մեծ է ձեր դերը այս իմաստով: Գիտեմ, ներկայ աշխարհի գեղագիտական նորաձեւութիւններուն բերումով, երբեմն մայր մը իր աղջիկէն զանագանելու դժուարութեան առջեւ կը գտնուինք, կամ մեծ մայրեր կը տեսնես, որոնք կրնաս իբրեւ հարսնցու ներկայացնել այս կամ այն աղջիկը փնտռող թեկնածուին..., սակայն այդ բոլորը չեն խանգարեր ձեր պարտականութիւնը, կամ լաւ

եւս՝ ձեր պարտաւորութիւնը ձեր թոռնիկներուն կամ ծոռերուն նկատմամբ: Տա՛յ Աստուած որ միշտ երիտասարդ մնաք, աշխոյժ ու կայտառ մնաք ու անպակաս ըլլաք ձեր ընտանիքներուն գլխէն: Որովհետեւ դո՛ւք պիտի ըլլաք ընտանեկան աւանդութիւնները սորվեցնողները. դո՛ւք պիտի ըլլաք անոնց քայլերը Աստուծոյ ճամբուն մէջ առաջնորդողները, աղօթե՛լ սորվեցնողները, Սուրբ Գիրք կարգալու հաճո՛յքը անոնց մէջ տեղաւորողները, Աստուծոյ վրայ իրենց յոյսը դնելու ուղղութիւնը տուողները, անոնց հաւատքը զօրացնողները, մէկ խօսքով՝ անոնց կողքին ամէն պահու քրիստոնէական դաստիարակութիւն ջամբողները: Ասկէ աւելի սուրբ ու վեհ գործ կարելի չէ՛ երեւակայել: Եւ ձեր զաւակներուն արցունքը պիտի խնայէ, որովհետեւ առանց քրիստոնէական դաստիարակութեան, դուք ու ձեր զաւակները օր մը ձեր ձեռքերը ձեր ծունկերուն պիտի զարնէք, երբ տեսնէք ձեր թոռներուն եկեղեցիէ հեռու կամ փտած կեանքը: Ահա թէ ինչպիսի՛ բարձր պատասխանատուութեան կանչած է ձեզ Աստուած:

Վերջապէս, ցոյց տալէ ետք քրիստոնէական դաստիարակութեան առօրեայ դրութեամբ աշխատանքը, գանք անոր կանոնական, դրութեանական, հաստատութեանական կերպին, որ է՝ Կիրակնօրեայ Վարժարաններուն դերակատարութիւնը մեր ազգային կեանքէն ներս:

(Շարունակելի 2)

**ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**  
**ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ**

ՀԵՂԻԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԵԳԻՐ՝ ԳԱՌՆԿ Բ. Գ.

**Զ ԳԼՈՒԽ**

**ԳԱՆՁ ԵՐԿԻՆԵՐ ԴԵՉ:**

«Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փեցցնեն եւ կամ գողերը պատդ փանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցէք երկինքի մէջ, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փեցցնել զայն, եւ ոչ ալ գողերը կրնան պատդ փանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը» (19-21):

Կը կարծեմ, որ այս հատուածին նիւթը բոլորիս ալ հետաքրքրութեան առարկան է: Որովհետեւ ուզենք կամ չուզենք մեր մտածումները կը դառնան գանձի շուրջ:

Այս համարներուն մէջ Յիսուս երկու տարբեր գանձերու մասին կը խօսի. հոգեւոր եւ նիւթական: Որոշ քարոզիչներ՝ նաեւ բարոյական գանձի ակնարկութիւն ալ կը տեսնեն այստեղ: Բայց Յիսուսի խօսքը շատ յստակ կերպով երկու սլաք ունի. երկնային եւ երկրաւոր:

Երկրի վրայ գանձերը առհասարակ ինչպէ՞ս կը դիզուին:

Երկրի վրայ գանձ դիզողը անդադար կերպով կը ժողվէ: Որքան ժողվէ՝ այնքան կը դիզէ: Մինչդեռ երկինքի մէջ գանձ դիզելը ճիշդ հակառակ տրամաբանութիւնը ունի: Մարդ որքան կը բաշխէ՝ այնքան աւելի կը գումարէ երկինքի մէջ:

Երկրաւոր հարստութեան մասին անդրադառնալու ատեն՝ կ'ըզեմ որ մտքէ չհանէք հետեւեալ ճշմարտութիւնը:

Եբրայեցի ժողովուրդը մտածելակերպ մը ունէր, որուն արտացոլացումները կը գտնենք Հին Կտակարանին մէջ: Երկրաւոր ինչքերը, ստացուածքները, հարստութիւնները կը նկատուէին Աստուծոյ օրհնութիւնը կամ պարգեւները: Կը մտածէին, թէ Աստուած կը հատուցանէ ներկայ կեանքին իսկ մէջ բոլոր անոնց՝ որոնք արդար կերպով եւ պատուիրանապահութեամբ կ'ապրին: Իսկ անիծելով՝ նիւթական բարիքներէ կը զրկէ անոնք՝ որ անարդար կամ պատուիրանագանց են:

Այս մտածելակերպը որոշ ժամանակ մը տիրապետող մնաց եբրայեցի ժողովուրդին մօտ: Սակայն ժամանակի ընթացքին, կեանքի իրականութիւններուն դիմաց, մարդիկ սկսան այլ կերպ մտածել: Եւ Աստուածաշունչին պատգամը՝ որ իմաստութեանական գրականութեան մէջ կը յայտնուի՝ այն է, թէ Աստուծոյ իսկական օրհնութիւնը կամ պարգեւները երբեք ալ նիւթական չեն: Ո՞վ ըսաւ, որ հարուստին ունեցածը Աստուծոյ պարգեւն է: Թէ Աստուած մէկուն նիւթական հարստութիւնը տուած է, որովհետեւ ան արդար է: Ոչ: Նախնական մտածելակերպ մըն է ատիկա: Աստուծոյ իսկական օրհնութիւնը կամ պարգեւները հոգեւոր են:

Ուշադրութիւն ըրէք, կ'ըսուի՝ «Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ»: Ընդհանրապէս երկրաւոր հարստութիւնը մարդիկ կը դիզեն իրենց սեփական անձերուն համար: Մինչդեռ երկինքի մէջ դիզողները՝ երբեք իրենց սեփական անձերուն համար չեն

դիզեր, այլ ուրիշներուն բաշխելով է՝ որ կը դիզեն: Այդ բաշխումը Յիսուս «ողորմութիւն» կոչած է: «Ողորմութիւն տուէք, կ'ըսէր, եւ ատով է, որ երկինքի մէջ ձեր գանձերը պիտի աւելնան: Եւ Աստուծոյ առջեւ պիտի ունենաք հարստութիւն մը, որ երբեք չի կորսուիր»:

Մենք կը տեսնենք, որ մարդուն մէջ բնական հակում մը կայ. ինքզինք ապահով կը զգայ, երբ երկրաւոր ինչք եւ հարստութիւն ունի: Եւ իրապէս ալ՝ հարստութիւնը գոնէ մարդուն այն կեղծ վստահութիւնը կու տայ, թէ ինք ամէն բանով ինքզինք ապահոված է: Այս առնչութեամբ Յիսուսի յստակ պատասխանը կը կարդանք Անմիտ Մեծահարուստի առակին մէջ (Դկ 12.16-21):

Այնտեղ մեծահարուստը կ'ըսէ. «Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտերմարաններու մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտե՛մ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.՝ Ով մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ՛. կե՛ր, խմէ՛ եւ վայելէ՛»:

Ապահովութեան այդ զգացումը կու տան երկրաւոր ինչքերը: Եւ այդ է պատճառը, որ մարդուն մէջ բնական հակում է նիւթապաշտութիւնը: Բայց գիտենք, որ նիւթապաշտութիւնը Աստուծոյ հաճելի ընթացք մը չէ: Որովհետեւ որքան ալ որ մարդը նիւթականով առատանայ կամ հարստանայ, եթէ Աստուծոյ համար առատացած կամ հարստացած չէ, ապա ոչինչ ունի՝ հակառակ իր նիւթական հարստութեան: Աստուծոյ ներկայացած ատենը՝ ան ամբողջապէս մերկ կը գտնուի եւ իր ձեռքերը դատարկ կ'ըլլան:

Ի՞նչ է պայմանը Աստուծոյ հարստանալու:

Ողորմութիւնը:

Երբ մեծահարուստ երիտասարդը եկաւ Յիսուսի եւ հարցուց անոր՝ թէ Աստուծոյ արքայութիւնը մտնելու համար ի՞նչ պէտք է ընէ: Յիսուս պատասխանեց. «Եթէ կ'ըզես յաւիտենական կեանքը մտնել՝ պատուիրանները պահէ»: Ու երիտասարդը հարցուց. «Ո՞ր պատուիրանները»: Յիսուս ըսաւ. «Մի՛ սպաններ, մի՛ շնար, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ տար, պատուէ՛ հայրդ ու մայրդ եւ սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Եւ երիտասարդը պատասխանեց. «Այդ բոլորը

պատանութենէս ի վեր պահած եմ. դեռ ի՞նչ կը պակսի ինծի»: Յիսուս ըսաւ. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինծի»: Այս խօսքին վրայ՝ երիտասարդը տրտում-տխուր կը ձգէ կ'երթայ, «որովհետեւ շատ հարուստ էր», կ'ըսեն ակետարանիչները:

Ուրեմն, ողորմութեամբ է, որ մէկը «կատարեալ» կ'ըլլայ, այսինքն՝ Աստուծոմով կը հարստանայ:

Այսօրուայ մարդուն ամբողջ մտածողութիւնը դէպի նիւթը դարձած է: Ան կեանքը չի կրնար հասկնալ կամ ըմբռնել առանց նիւթականին: Երբեմն նոյնիսկ այս մասին խօսիլը՝ շատերուն համար գայթակղութիւն է: Ինչպէ՞ս կարելի է հարստութենէն հրաժարիլ, կ'ըսեն:

Արդեօք մենք կրնա՞նք ընկերութեան նիւթապաշտ մտածողութիւնը փոխել կամ ուղղել:

Յիսուսի խօսքը դիզելու մասին է: Գանձ դիզելու հարց մը կայ: Յիսուս չ'ըսեր, թէ մարդիկ իրաւունք չունին աշխատելու եւ դրամ շահելու: Աշխատիլը եւ դրամ վաստկիլը անհրաժեշտ են՝ կեանքին պէտքերը հոգալու համար: Սակայն ո՞վ է, որ պիտի որոշէ այդ պէտքերուն սահմանը: Մարդը՝ ինք: Բայց, դժբախտաբար, ան առհասարակ ի վիճակի չէ որոշելու, ուստի փորձութիւններու մէջ կ'իյնայ:

Ո՞ւր է, որ պէտքերը հոգալը՝ դիզելու կը սկսի փոխուիլ:

Դիզելու սահմանը կը սկսի, երբ այլեւս պէտք եղածէն ակելին է, որ կ'ուզենք եւ կը հետապնդենք ունենալ: Մեզի պէտք եղածը՝ անմիջականօրէն պէտք եղածն է: Ես կրնամ մտածել. «Է՛հ, գալ տարի թերեւս տուն մը կրնամ առնել: Ուրեմն, ինծի պէտք է աս դրամը»:

Մարդուս ամենօրեայ կարիքները հոգալու նիւթականը՝ օրինաւոր է: Սակայն երբ մարդը կը սկսի նիւթականը վերածել բարձրագոյն նպատակի, ապա կը սկսի հոգեւորէն հեռանալ, որովհետեւ երբեք ալ այն բարձրագոյնին չի կրնար հասնիլ, քանի որ աշխարհի մէջ, ինչպէս կ'ըսեն՝ նիւթական լաւ վիճակէ մը՝ ակելի լաւ վիճակ մը կայ: Արդ, ակելի եւ ակելի հարստութեան հասնելու ձգտումը՝ նիւթապաշտութեան գերի կը դարձնէ՝ զիս եւ ես կը սկսիմ անտեսել ինչ որ երկնային հարստութիւնն է, Աստուծոյ քով հարստութիւնն է: Եւ զայն կը կորսնցնեմ: Ու երբ ժամանակս կ'աւարտի եւ այս կեանքէն կ'ելլեմ՝ երբեք ալ

մտածած չեմ ըլլար իմ բուն հարստութեանս մասին:

Յակոբոս առաքեալ ըսած է. «Ձեր արծաթն ու ոսկին ժանգոտ են, եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայութիւն պիտի ըլլայ եւ կրակի պէս լափէ ձեր մարմինները...» (Յկ 5:3): Ուրեմն, փոխանակ դրամին գերին ըլլալու՝ առաքինութիւններուն հետամուտ ըլլանք:

«Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»: Ըստ մեր փորձառութեան, մարդ իր ստացածէն ակելի, իր գտածէն ակելի՝ ինքզինք կը կապէ այն բաներուն, որոնք ինքն իր ձեռքով կը ստեղծէ կամ կը հաւաքէ կամ կը կառուցէ: Գիտենք, որ երբ քանի մը տողնոց մտածում մը գրած ըլլանք, ատիկա նախանձախնդրօրէն պահել կ'ուզենք: Պատիկ բան մը որ շինենք, եւ որքան ալ ատիկա յետագայ փորձառութեամբ նայելու պարագային ջնջին երեւի, բայց քանի որ մենք շինած ենք՝ մեր կեանքին մէջ իւրայատուկ նշանակութիւն մը կ'ունենայ անիկա եւ իրեն կը կապէ մեզ:

Սիրտը խորհրդանշանն է մարդուն զգացումներու աշխարհին եւ մտքին, նաեւ ամբողջ գոյութեան: Արդ, երբ Յիսուս կ'ըսէ՝ «ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը», ըսել կ'ուզէ թէ՛ ինչ որ մեզի համար գանձ կը համարենք՝ մեր զգացումներն ու միտքը, ինչպէս նաեւ մեր ամբողջ գոյութիւնը անոր կապուած կ'ըլլան: Եթէ նիւթական է մեր գանձը՝ նիւթականին կապուած կ'ըլլանք, եւ անոր փճացումին հետ մենք ալ կը փճանանք: Եթէ հոգեւոր է մեր գանձը՝ հոգեւորին կապուած կ'ըլլանք. եւ որովհետեւ հոգեւորը չի փճանար՝ մենք ալ անոր մէջ կ'ապրինք, անո՛վ կ'ապրինք:

#### ՀԱՄԱՅՆ ԾՐԱԳՐ:

«Աչքն է մարմնին նրազը. երբ աչքն առողջ է՝ ամբողջ մարմինն լուսաւոր կ'ըլլայ, իսկ երբ աչքն վատառողջ է՝ ամբողջ մարմինն խաւար կ'ըլլայ: Արդ, եթէ մէջդ եղող լոյսը խաւար է, որքան ակելի մթին է այդ խաւարը» (22-23):

Հինէն եկող պատկերացումով՝ մարմինը կը նմանի տունի: Ինչպէս տուն մը իր լոյսը կը ստանայ իր պատուհաններէն՝ այնպէս ալ մարմինը իր լոյսը կը ստանայ աչքերէն: Եթէ աչքերը բաց են, ապա լոյսը ներս կը թափանցէ եւ մարմինը կը լուսաւորուի:

Երկու բան ըսուած է աչքին համար: Եթէ աչքը առողջ է՝ այն ատեն ամբողջ մարմինը լուսաւոր կ'ըլլայ: Իսկ եթէ աչքը վատառողջ է, այն ատեն ամբողջ մարմինը խաւար կ'ըլլայ:

Ուրեմն, եթէ մէջդ եղած լոյսը խաւար է, ապա որքան թանձր է «այդ խաւարը»: Արդեօք ինչի՞ մասին կը խօսի Յիսուս:

Աչքը յստակ կերպով աշխարհին հետ մարդուն կապն է: Միաժամանակ մարդուն հայեացքն է՝ թէ՛ շրջապատը դիտելու եւ թէ՛ կշռադատելու համար:

Եթէ աչքդ առողջ է (այսինքն՝ մտքիդ եւ հոգիիդ աչքը) կրնաս նաեւ գտնել, թէ ի՞նչ բանն է կեանքին մէջ իսկական արժէքը եւ թէ ի՞նչ բանի կարեւորութիւն պիտի տաս: Ի՞նչ բանի մէջ պէտք է տեսնել գանձը: Երկնաւորի՞ն մէջ, թէ երկրաւորին: Աչքը ի՞նչ բանի վրայ որ յարած ես, այդ մէկը կը դառնայ իսկական արժէքը կեանքիդ: Բարոյական բացատրութիւն մը տալու պարագային, եթէ երբեք աչքդ առողջ է, եթէ դուն արժէքները աստուածային ականգնութեամբ տեսնելու ի վիճակի ես, այն ատեն կրնաս գիտնալ, թէ իսկական հարստութիւնը ո՞ր մէկն է: Իսկ եթէ դատողութիւնդ վատառողջ է, այն ատեն քու դատումներդ ալ խախուտ են, ուստի խաբկանքներու գոհ կ'երթաս: Բան մը՝ որ ուղիղ չէ, դուն ուղիղ կը սեպես: Մինչդեռ իրական արժէքը ուրիշ տեղ կը կայանայ:

Երբ Յիսուս ճրագի օրինակը բերաւ, նկատի ունէր հաւատքը: Ծրագը հաւատքն է: Յիշենք օրինակ՝ Տասը կոյսերու առակը:

Արդ, ի՞նչ է կապը վերջին երեք հատուածներուն:

Ծոմապահութիւնը այն միջոցն է, որ այս կեանքին մէջ մարդ էակը զգաստութեան մէջ կը դնէ: Եթէ երբեք զայն ուտելիքի հասկացողութենէն դուրս բերենք, որովհետեւ ծոմապահութիւնը միայն ուտելիքի հարց չէ: Այլ անիկա ճիգ մըն է սեփական անձը զգաստութեան վարժեցնելու, զայն զգաստ պահելու: Այսինքն՝ կեանքի բոլոր կալուածներուն մէջ՝ մտածողութեան, զգացողութեան եւ ամենօրեայ վարուեցողութեան մէջ չափաւորութիւն մտցնել: Ամէն բանի ճիշդ չափը եւ կշիռը գտնել: Անոնց ուղիղ նշանակութիւնը տալ: Զգաստութեան հայեացքը մշակած մարդուն համար ծոմապահութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Անկախ այն հանգամանքէն թէ ինք սեղանին վրայ այսինչը կ'ունենայ այդ օր թէ չ'ունենար: Այդ անհրաժեշտութիւնը՝ Քրիստոսի հետ ըլլալու համար է: Մեր Տէրը ըսաւ, որ իր հետեւորդները ծոմ պիտի բռնեն, երբ ինք անոնցմէ առնուած պիտի ըլլայ:

Ծոմապահութիւնը անհրաժեշտ ճամբայ

մըն է, միջոց մըն է Աստուծոյ բացակայ ներկայութիւնը զգալու համար: Հակասական բացատրութիւն մը գործածեցի՝ «բացակայ ներկայութիւնը»: Անոնք որ Յիսուսի օրով ապրեցան եւ իրեն մօտ եղան, զայն մարմնաւոր աչքերով տեսան: Մենք սակայն իր մարմնաւոր ներկայութիւնը չէ, որ կը փնտռենք, այլ ներկայութիւնը՝ որ խոստացուած է մեզի («Ես ձեզի հետ եմ մինչեւ վախճանը այս աշխարհի»): Հետեւաբար այդ ներկայութիւնը մեր մէջ կենդանի դարձնելու կերպ մըն է ծոմապահութիւնը: Գանձի օրինակն ալ նոյն բանը կ'ըսէ մեզի: Նոյնպէս աչքի օրինակը: Նաեւ միւս խօսքը՝ որ պիտի ըսէ. «Ոեւէ մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել եւայլն» (Մտ 6.24):

Երկու ուղղութիւնները իրարու հակընթաց են. երբ դէպի երկրաւորը կը քալենք, երբ դէպի նիւթական ճոխութիւնը եւ վայելքները կը քալենք՝ այն ատեն բնականօրէն քալած կ'ըլլանք ուղղութեամբ մը, որ Աստուծմէ եւ Քրիստոսէ հեռացման ուղղութիւնն է: Այն մարդը որ կ'ուզէ Աստուծոյ կամ Քրիստոսի ներկայութիւնը գտնել՝ պէտք է որ զգաստութեան ճիգը ընէ եւ յաղթանակ մը տանի մարմնին վրայ, որովհետեւ, ինչպէս Պօղոս առաքեալ կը բանաձեւէ՝ «մարդկային բնութիւնը Ս. Հոգիին ցանկացածին հակառակն է որ կը ցանկայ, իսկ Ս. Հոգին՝ մարդկային բնութեան ցանկացածին հակառակը» (Գղ 5.17):

Զգաստութեան ճիգին հետ՝ մարդը պէտք ունի առողջ աչքի մը, հաւատքի աչքի մը, որպէսզի կարենայ ճիշդ արժէքները տեսնել: Եւ նաեւ որպէսզի զգայարանքները կարենայ մշակել այնպիսի կերպով մը՝ որ կարենայ ուղիղ քալել:

Մենք ուզենք թէ չուզենք այս աշխարհին մէջ պիտի ապրինք: Բայց այս աշխարհին մէջ ապրելով հանդերձ՝ այս աշխարհի չափանիշները պէտք չէ որ որդեգրենք: Պօղոս առաքեալ յորդորած է, ըսելով. «Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէ՛ք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէ՛ք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէ՛ք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Հռ 12.2):

(Շարունակելի 26)

## ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Երեքշաբթի, 24 Փետրուար 2009

19.00 «The Da Vinci Code»

Ֆիլմի ցուցադրութիւն եւ զրոյց

Չորեքշաբթի, 25 Փետրուար 2009

Մեծ Պաշար Գ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ ձաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Ա.

Հրագւշաբթի, 26 Փետրուար 2009

Մեծ Պաշար Դ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Ողորմածութիւն»ը

Կրոնար, 01 Մարտ 2009

Արսաբաւն Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 04 Մարտ 2009

Մեծ Պաշար Ժ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ ձաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Բ.

Հրագւշաբթի, 05 Մարտ 2009

Մեծ Պաշար ԺԱ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Եղբայրսիրութիւն»ը

Կրոնար, 08 Մարտ 2009

Անառնար Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 10 Մարտ 2009

19.00 «Տա Վինչի Գոտ» քննարկում  
Երիտասարդական ներկայացում/զրոյց

Չորեքշաբթի, 11 Մարտ 2009

Մեծ Պաշար ԺԵ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ ձաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Գ.

Հրագւշաբթի, 12 Մարտ 2009

Մեծ Պաշար ԺԸ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Նոնարհութիւն»ը

Կրոնար, 15 Մարտ 2009

ՏԱՏԱՐ Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 18 Մարտ 2009

Մեծ Պաշար ԻԴ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ ձաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Դ.

Հրագւշաբթի, 19 Մարտ 2009

Մեծ Պաշար ԻԵ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Աշխատասիրութիւն»ը

Կրոնար, 22 Մարտ 2009

ԴԱՏԱՌՈՐ Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

## ՀԱՎՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

ԵՒ

ՃԱՇԱԿԵՆՔ «ՀԱԽՏՈՎ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»Ն

1-4 ՀԱՄԱՐՆԵՐ՝ ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ԱՐԺ. Տ. ԱՐԱԷԱ

Ա. ՔՀԱ. ԻՇՆԱՆԵԱՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՓԵՏՐՈՒՄ 2009

ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՐ 7.00-ԻՆ

## ԱՐԵՎԱԶԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

ԵՒ

«ՈՊՈՐԱԾՈՒԹԻՒՄ»Ն՝

ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ԱՐԺ. Տ. ՀՐԱՅՐ

Ա. ՔՀԱ. ՆՐԿՈՒԵԱՆ

ՀՐԱԳՇԱԲԹԻ, 26 ՓԵՏՐՈՒՄ 2009

ԱՊՈՏԵԱՆ ԺԱՐ 11.00-ԻՆ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՐ Ե-ԱՊԱՆՎՈՎ ԱՏԱՆՎՈՒ

ՀԱՄՐ ԶԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՐԿԵՅԷՔ

eglise58@sourphagop.com-ԻՆ

ՀԱՊԱՅԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄՐ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՆԸ

ԲՈՅ Է

ԵՐԿՈՒԵՔԹԵՒՆ ՈՒՐԲԱԹ

ԺԱՐ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿՊՈՒԻՂ ԲԱՐՏՈՒԱՐՈՒԹԵԱՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻՒՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵՂ ՀԵՏԵԷԿՂ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝

eglise58@sourphagop.com